



Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ)՝ «ՀԿ Դեպո» Հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագրի շրջանակներում կազմակերպեց «Ինչպես հայթայթել ռեսուրսներ և կազմել մրցունակ ծրագրեր» թեմայով գործնական դասընթաց,

որը տեղի ունեցավ փետրվարի 7-8-ը Դիլիջան քաղաքում: Դասընթացը վարեցին ԵՀՀ փորձագետները: Մասնակցեցին Տավուշի և Լոռու հասարակական կազմակերպությունները: Դասընթացին մասնակցեցին նաև «Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն» (CCMS) ՀԿ-ի ներկայացուցիչներ Ռուզան Մոսինյանը և Տաթևիկ Մարտիրոսյանը: Դասընթացը վարեցին ԵՀՀ փորձագետները: Դասընթացի ժամանակ մասնակիցները բարելավեցին իրենց կարողությունները հետևյալ ուղղություններով. Միջազգային զարգացման հաստատությունները և դոնորային ռեսուրսները, Կազմակերպության հաղորդակցության սկզբունքները, Ինչպես գտնել և աշխատել դրամաշնորհային հայտի հետ, Ինչպես գրել մրցունակ ծրագրի առաջարկ:  
ՀԿ կառավարման դպրոցի նպատակն է Հայաստանում ՀԿ-ների կարողությունները զարգացնել այնպես, որ դրանք դառնան Հայաստանում բարեփոխումների գործընթացներին աջակցող կայուն դերակատարներ: ՀԿ դպրոցը հանդիսանում է «ՀԿ Դեպո» ծրագրի կարողությունների զարգացման համապարփակ շղթայի մի մասը:

